ՕԳՆԵՆՔ ԲՆՈՒԹՅԱՆԸ

ԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆ ԵՄ

Ես բնության բարեկամն եմ և գիտեմ, որ

- ✓ պետք է մաքուր պահել մեր շրջակայքը,
- ✓ չփչացնել կանաչ տարածքները,
- ✓ կոնֆետի ու պաղպաղակի թղթերը, ըմպելիքի պլաստիկ շշերը չնետել այս ու այն կողմ:

Ես գիտեմ, որ նաև ԻՆՁԱՆԻՑ է կախված
ՄԵՐ քաղաքի մաքրությունը,
ՄԵՐ հայրենիքի գեղեցկությունը
և ՄԵՐ մոլորակի առողջությունը:
Որովհետև ԵՍ բնության բարեկամն եմ
և օգնում եմ բնությանը:

Իսկ դու գիտե՞ս, որ ըմպելիքի պլաստիկ շշերը վտանգավոր են բնության համար:

Դրանք պատրաստվում են նավթից, չեն քայքայվում հողում ինչպես, ասենք բույսերի, կերակրի մնացորդները, տերևներն ու անգամ թուղթը:

Հավերժ մնալով հողում արտազատում են վտանգավոր նյութեր, որոնք աղտոտում են հողը, ջուրը և օդը:

Հատկապես վտանգավոր է պլաստիկ շշերի այրումը:

Այդ դեպքում մթնոլորտ են նետվում մեծ քանակությամբ թունավոր գազեր, ինչը շնչելով մարդիկ կարող են հիվանդանալ:

Եթե դու բնության բարեկամն ես, քո շրջապատի մարդկանց պատմի՛ր պլաստիկ շշերի այրման վտանգի մասին:

Պլաստիկ շշերը հարմար են օգտագործման համար,
դրանք թեթև են ու չեն ջարդվում:
Սակայն, որպեսզի օգտագործելուց հետո դրանք
չսպառնան բնությանն ու մեր առողջությանը,
պլաստիկ շշերը պետք է վերամշակել:

Այդ նպատակի համար դրանք չպետք է
նետել ընդհանուր աղբի մեջ,
ինչպես անում էիք մինչև հիմա:

Այժմ ձեր բնակավայրում
տեղադրված են այսպիսի
աղբամաններ, հատուկ
պլաստիկ շշերի համար:

ԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆ ԵՄ

Հավաքված շշերը պարբերաբար դատարկվում են աղբամաններից և տեղափոխվում գործարան՝ վերամշակման: Գործարանում դրանք վերածվում են թեփուկների, որոնցից այնուհետև պատրաստում են բազմապիսի կենցաղային առարկաներ:

Այսպիսով, պլաստիկ շիշը օգտագործվելուց հետո ոչ միայն չի աղտոտում բնությունը, այլև ծառայում է մարդկանց:

Եթե դու պլաստիկ շշերը չես նետում այս ու այն կողմ, այլ գցում ես հատուկ աղբամանի մեջ, ուրեմն դու բնության բարեկամն ես:

Այս հրապարակումը պատրաստվել է
Հայաստանում Լիտվայի Հանրապետության
դեսպանության ֆինանսական աջակցությամբ

Եթե դու բնության բարեկամն ես
և ցանկանում ես օգնել բնությանը,
լրացրու՛ այս թերթիկ-նամակը,
պոկիր գրքույկից և հանձնիր
քո դասղեկին:

Այնուհետև լավագույն
նամակները կտեղադրվեն
ինտերնետում և բոլորը քեզ
կճանաչեն որպես
բնության բարեկամ:

բնակավայր ..... ամսաթիվ .....

դպրոց ..... դասարան .....

անուն, ազգանուն .....

ԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆ ԵՄ

Ինչպես եմ ես օգնելու բնությանը .....

.....

.....

.....

.....

.....

Եթե դու բնության բարեկամն ես
և ցանկանում ես օգնել բնությանը,
լրացրու՛ այս թերթիկ-նամակը,
պոկիր գրքույկից և հանձնիր
քո դասղեկին:

Այնուհետև լավագույն
նամակները կտեղադրվեն
ինտերնետում և բոլորը քեզ
կճանաչեն որպես
բնության բարեկամ:

Ում եմ ես պատմելու պլաստիկ շշերի վտանգի մասին

.....

.....

.....

.....

.....

.....

.....